ՀԻՄՆԱՐԿԵՔԻ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆՅԱՑ ԹԵՄՈՒՄ

Հուլիսի 19-ին տեղի ունեցավ Գեղարքունյաց թեմի Սարուխան համայնքի Ս. Աստվածածին եկեղեցու հիմնարկեքի արարողությունը: Գյուղական համայնքի և հավատացյալների ներկայությամբ, ձեռամբ թեմի առաջնորդ Տ. Մարկոս եպս. Հովհաննիսյանի, օծվեցին եկեղեցու հիմքի 16 քարերը: Եկեղեցին կառուցվում է ծնունդով սարուխանցի Արայիկ Ավետիսյանի ազնիվ բարերարությամբ: Նախագծող ճարտարապետն է Ստեփան Նալբանդյանը:

Համայնքում միաժամանակ հիմնովին նորոգվում է հավատքի ևս մեկ օջախ՝ Ս. Գևորգ եկեղեցին, որը կառուցվել է XIX դ. առաջին կեսին Բայազետից այստեղ ներգաղթած հայերի կողմից:

Հավարտ արարողության Սրբազանը հավաքվածներին ուղղված իր խոսքում նշեց, որ եկեղեցաշինության այս գործընթացը խոսուն վկայություն է հոգևոր վերազարթոնքի, քանզի երկու եկեղեցիներն էլ վեր են հառնում՝ իրականացնելով բարերարների վաղեմի ուխտն ու համայնքի երկարամյա երազանքը: